



ՀՀ ԿՊՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵՔԱՍՏԱՏՍԻ» ԿՐԹԱԳԱՍՏԱԼԻՐ» ՊՈԱԿ

«MKHITAR SEBASTATSI» EDUCATIONAL COMPLEX

MINISTRY OF SCIENCE AND EDUCATION OF THE REPUBLIC OF ARMENIA

0064, Երևան, Բաժնու 57 հեռ: (374 10) 74 72 46. (374 91) 43 10 99 info@mskh.am www.mskh.am
Raffy 57.Yerevan, tel:(374 10)74 72 46.(374 91)43 10 99 https://www.facebook.com/mxitar.sebastaci?fref=ts

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կրթահամալիր) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող փորձարարական-հետազոտական, նախադպրոցական, հանրակրթական հեղինակային, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական փորձնական, նախասիրական, լրացուցիչ (այդ թվում՝ արտադպրոցական) կրթական ծրագրեր իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

Կրթահամալիրը պատասխանատու է պետական կրթական չափորոշիչներին, սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին, նրանց կյանքի անվտանգության, առողջության պահպանման և մանկավարժական պահանջներին համապատասխան հեղինակային (պետական այլընտրանքային) ծրագրերի իրագործման, ուսուցման մեթոդների և ձևերի մշակման ու ընտրության համար:

Տեղեկանք 1

Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (ՀԽՍՀ) Ժողկրթության մինիստրության կոլեգիայի 14.07.89թ. հ. 12 որոշմամբ Երևանի հ. 183 փորձարարական դպրոցը վերաձվել է հանրակրթական փորձառական գիտարտադրական համալիր-կրթօջախի («Մխիթար Սեբաստացի» կրթօջախ):

ՀԽՍՀ մինիստրների խորհրդի 1990թ. մայիսի 10-ի հ. 216 որոշման մեջ, որպես կրթահամալիրի նպատակ է սահմանվել ազգային դպրոցի հարուստ ավանդույթների վերածնունդը և առաջավոր կրթական կոնցեպցիաների ներդրումը, այդ թվում նաև՝ **թ. 183 հանրակրթական դպրոցի սպեղծագործական-մանկավարժական կոլեկտիվի կողմից մշակածը:**

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության պետական կոմիտեի կոլեգիայի 1991թ. օգոստոսի 26-ի հ. 78 որոշմամբ փորձառական գիտարտադրական հանրակրթական «Մխիթար Սեբաստացի» համալիրը վերանվանվել է

Հայաստանի Հանրապետության «Մխիթար Սեբաստացի» կրթական համալիրի և հաստատվել համալիրի կանոնադրությունը: Այդ կանոնադրության 2.6 կետում գրված է. **«համալիրն ինքն է որոշում կրթության բովանդակությունն ու կրթության կազմակերպման ձևերը, կրթության արդյունքների գնահատման չափանիշներն ու համակարգը, ինքն է մշակում, հաստատում և գործադրում բոլոր կրթական ծրագրերը, ուսումնական պլաններն ու ուսումնական ձեռնարկները, հեփազոփական աշխատանքների թեմաներն ու մանկավարժների կատարելագործման կերպը»:**

ՀՀ բարձրագույն կրթության և գիտության նախարարության կոլեգիայի 1994թ. սեպտեմբերի 19-ի հ. 116 որոշմամբ հաստատվել է կրթահամալիրի (պետական ձեռնարկության) նոր կանոնադրությունը: Կանոնադրությունում որպես կրթահամալիրի խնդիր է ձևակերպված. **«կրթահամալիրի ուսուցիչների հեղինակած, կրթական հայեցակարգի մշակում ու ներդրում: Կրթության նոր բովանդակության նյութականացում՝ կրթական ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ուղեցույցների, կրթական նոր հաստատությունների և ուսուցման նոր տեխնոլոգիաների տեսքով՝ նպաստելով հանրապետությունում դասագրքերի շուկայի ձևավորմանը»:** Ինչպես նաև. **«համալիրի կրթական հաջողությունների փարածում հանրապետության փարքեր շրջաններում՝ բազմաբովանդակ կրթական ենթահամալիրների ստեղծման ճանապարհով»:**

ՀՀ կառավարության 2003թ. փետրվարի 27-ի հ. 361 որոշմամբ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» պետական ձեռնարկությունը վերակազմավորվել է «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության:

ՀՀ ԿԳ նախարարի 2003թ. ապրիլի 25-ի հ. 259-Ն հրամանով հաստատվել է «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը: Դրանից հետո կատարվել են օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես ընդունվել է ՀՀ օրենքը Հանրակրթության մասին, որտեղ «հեղինակային կրթական ծրագիր՝ այլընտրանքային կրթական ծրագրի տեսակ, որը միջազգային չափանիշներով ճանաչված (վկայագրված) է որպես հեղինակային կամ ստեղծված, մշակված և ներդրված է մանկավարժական որոշակի համակազմի կամ կառավարման մարմնի (մարմինների) կողմից»:

ՀՀ ԿԳ նախարարի 15.05.2017թ. N 533-Ն հրամանով կանոնադրությունում արվել են փոփոխություններ: